

Ուստի և նոյնպիսի դէպքի մէջ պէտք չէ
ինչ և իցէ զգուշութիւն զանց ընել:

— Ահա նախաճաշի ժամանակը հա-
սաւ, ըստ ձ'ոյ. պահծու մսով ու սուր-
ճով գոհանալու ենք, մինչև որ պարոն
Քէննըտի միջոց մը գտնէ ու մեզի երէոյ
աղէկ մսի կտոր մ'ընծայէ:

Կը շարունակուի:



Օր 'ի թրումզոյ.

Սրեւոն շարունակ ներկայութիւնն, և
օդուն հաստատուն պարզութիւնն՝ այս
գաւառաց ցորեկներուն մասնաւոր գե-
ղեցկութիւն մը կու տան: Երբ կէս զի-
շերուան մօտ արեն իր ընթացքը դէպ-
'ի հիւսիս կը շարունակէ, բոլոր եր-
կիրն՝ հարաւային գաւառաց պէս՝ երե-
կոյեան հանդարտութիւն մը կը վայե-
լէ: Երբ այս աստղս զարձեալ կը բարձ-
րանայ, կը կարծուի թէ օրն ալ նորէն
կը սկսի. և որչափ որ երթալով կը
բարձրանայ, նոր ջերմութիւն մը կը
տարածէ բոլոր երկրին վրայ: Պայծա-
ռութիւնը ամէն վայրկեան ալ նոյն է,
և երբ ջերմաշափը ցածնալով կը ծա-
նուցանէ թէ կէս զիշերը անցած է,
մարդ հազիւ կը կարծէ թէ իրիկունը
դացած է:

Սրեւոն տեսքին տուած աղղեցու-
թիւնը միշտ պարզ է, վասն զի այն ար-
խուր տպաւորութիւնն զոր կ'աղզէ մար-
դուս՝ ալեաց վրայ տարածուելով՝ հոս-
չի խոռվեր զմարդ. կէս զիշերէ քիչ մը
ետքը բոլոր բնութիւնը կը սկսի կա-
մաց կամաց կենդանանալ:

Գետնէն ամպեր կը բարձրանան, և
այլ և այլ ձևերով օդուն մէջ և լերանց
վրայ կը տարածուին. ծովուն մակե-
րեսին վրայ պղտիկ ալիքները կ'իմացը-
նեն որ հիւսիսէն եկող օդն աստիճա-
նաբար աւելի ուժով դէպ'ի հարաւ կը
մղուի: Արեգակն կը բարձրանայ հորի-
զոնին վրայ, իր ճառագայթները հետ-
զիետէ գետնին վրայ կ'աղղեն: Առուա-
կաց խոխոջիւնն՝ որք գեռ երկերը ծած-

կող ձեանց հալելովը կ'ուռին, զգալի
կերպով կ'ածի: Հիւսիսային քամին բո-
լորովին տիրած է. ալ չի վշեր մրրկի
պէս, այլշարունակ կարգաւորութեամբ
մը նեղուցին վրայ: Երեկոյին ժամը ու-
թին՝ ամենայն ինչ դարձեալ խաղաղա-
ցած է, ոչ օդուն մէջ ամալ կայ, ոչ հիւ-
սիսային քամի: Գիշերը՝ արեգական
քաղցր ջերմութենէ զատ բան չըզգար
մարդ:

Բևեռային շրջանակէն անդին եղած
ափանց վրայ՝ քիչ տեղ կայ որ թրոմ-
զոյի պէս վայելէ արևունակը ըն-
թացքը հորիզոնի վրայ՝ առանց ընդմի-
ջելոյ: Գրեթէ ուրիշ ամէն տեղ ժայռ մը
կամ բարձրաւանդակ մը քանի մը ժամ
անոր տեսպը կը խափանեն: Դարձեալ
երբ երևայ՝ այնպէս կու թուի ինչպէս
թէ հորիզոնէն նոր գուրս ելած ըլլար:
Երբ աներեսոյթ կ'ըլլայ, օդոյն բարե-
խառնութիւնն կը ցածնայ. Երբ առա-
ւոտեան հինդին կամ եօթին երևայ՝
ժամէ մը կը բարձրանայ: Այս բանս
տեսած էինք 'ի Լէտինկէն. բայց ու-
րիշ տեղեր երկու անգամ արևու ելլա-
լը կը տեսնեն, և երկու անգամ նոյն
առթիւ օդոյ բարեխառնութիւնը կը
զգան: Ի թրոմզոյ կէսօրէն ետքը մինչե-
երկուքը՝ ջերմութիւնը կ'ածի, և 43 կամ
44 աստիճանի կը հասնի. մինչև ութը
կամաց կամաց կը ցածնայ, յետոյ ա-
ւելի արագ մինչեւ 'ի 10 ժամ. անկէ ետև
դարձեալ քիչ քիչ մինչեւ կէսգիշեր. այս
ատեն 8 կամ 9 աստիճանի կը հասնի:
Բայց կէսգիշերուն և ժամմը միջոցնորէն
կը սկսի ածիլ: Արեգակն հոս երկու
ամիս հորիզոնին վրայ կը կերնայ, կամ
մայիսի կիսէն մինչեւ յուլիսի վերջը:

Խէ՛ՌՈՒԼՏ ՏԸ ՊԻՒԹ:



Տեսիլ գերմանիոյ.

Անտառաց բաղմութիւնն և տարա-
ծութիւն քաղաքականութեան գեռ նոր
սկսիլը կը ցուցընեն. հարաւոյ հին եր-
կերը՝ գրեթէ անծառ է, և արեգակն

շեշտակի կ'իջնայ մարդկանց կողոպ-
տած երկրին վրայ : Ալպեան լեռներէ
մինչև ծովը, Հռենոսի և Դանուբի միջոց
կը տեսնաս երկիր մը կաղնիներով և
եղեիններով ծածկուած, մեծաքանչ
գեղեցկութք գետերով կտրտուած, և
նկարչական տեսլեամբ լեռներով բաժ-
նուած . բայց լայնատարր խոպան երկիր-
ներ, աւազներ, երեսի վրայ ձգուած ճամ-
բաներ, ցուրտ կլիմայ մը, մարդուս հո-
գին տրտմութեամբ կը լեցընեն . և շատ
ուշ կը նշմարէ մարդ բնակութեան
յարմար բաները :

Գերմանիոյ հարաւային կողմը շատ
մշակուած է . սակայն այս երկրիս ամե-
նէն գեղեցիկ գաւառաց մէջ ալ լրջու-
թիւն մը կայ, որ աւելի աշխատանք կը
յիշեցնէ, քան թէ զբօսանք, բնակչաց
առաքինութիւնը քան թէ բնութեան
վայելչութիւնը :

Լերանց վրայ տեսնուած ամուր բեր-
դերու մնացորդն, հողէ տուներն, նեղ
պատուհանները, ձիւնը՝ որ ձմեռը լայ-
նածաւալ դաշտերը կը ծածկէ, տխուր
տպաւորութիւն մը կը պատճառեն :

Բնութեան և մարդկանց տեսակ մը
լուսթիւնը մէկէն մարդուս սիրաը կը
ճմէ . կարծես թէ ժամանակը հոն ու-
րիշ տեղերէ աւելի կամաց առաջ կ'եր-
թայ, մարդկանց դաղափարներն երկրին
բոյսերուն պէս դանդաղ կ'աճին, և եր-
կրագործին կանոնաւոր ակօսները պիշ-
դագոյն հողի մը վրայ կը գծուին հոն :

Սակայն երբ մարդ այն անպատճառ
զգացմանց յաղթէ, երկիրը և բնակիչն
քննութեան օգտակար և բանաստեղ-
ծական բան մը կ'ընծայեն . այն ատեն
կ'իմանաս որ հանդարտ հոգիք և երեա-
կայութիւնք այս դաշտերը զարդարեր
են : Մեծ ճամբաներ պտղատու ծառե-
րով ծածկուած են, զճամբորդը զուար-
ճացըներու համար : Հռենոսի երկու կող-
մի վայրենի տեսարանները գրեթէ միշտ
չքեղատեսիլ են . կարծես թէ այս գետս
գերմանիոյ խնամակալ ոգին է . իր ա-
լիքը հին հսկայի մը կենաց պէս մաքուր
սրավար և մեծավայելուչ են : Դանուր
այլ և այլ ճիւղեր կը բաժնուի . Ալպայի

և Սրբէի ջուրերն փոթորկէ դիւրաւ կը
պղտորին . Հռենոս միայն գրեթէ անայլ-
այլակ է : իր անցած գաւառները՝ այն-
պէս ծանր և զանազանակերպ, բերրի
և անձայն կ'երևան, որ մարդուս կար-
ծել կու տայ թէ զանոնք մշակողն ինքն
ըլլայ, և թէ հիմակուան մարդիկ հոն
բանի չեն գար :

Այս գետս իր ճամբուն վրայ, ան-
ցեալ ժամանակաց մեծամեծ գործերը
կը պատմէ, և գողցես Արմինիոսի ու-
րուականն գեռ իր սեպացեալ ափանց
վրայ կը թափառի :

Գերմանիա միայն գոթական շինուած-
ներով անուանի է . այս շէնքերս ասպե-
տաց դարերը կը յիշեցընեն . գրեթէ
ամեն քաղաքաց թանգարանաց մէջ
այն ժամանակուան մնացորդները կը
պահուին :

Մարդուս այնպէս կու գայ՝ թէ Հիւ-
սիսային բնակիչք, յաղթողք բոլոր աշ-
խարհիս՝ գերմանիայէն անցնելով հոն
զանազան ձեւերով թողած են իրենց
յիշատակները, և թէ բոլոր երկիրն կը
նմանի մեծ ժողովրդեան մը բնակարա-
նի՝ զոր երկայն ատենէ 'ի վեր թողած
ըլլայ : Գերմանիոյ քաղաքաց զինա-
րաններուն մեծ մասին մէջ սպառազէն
ասպետաց փայտէ ներկեալ պատկեր-
ներ կան . սաղաւարտ, վահան, սոնա-
պանք, մորակք ըստ հին սովորութեան
են . այս կանգուն մեռելոց մէջ կը պտը-
տի, որոնց բարձրացած թեւրն կարծես
թէ իրենց հակառակորդաց հարուած
մը տալու վրայ են, և նմանապէս մէկալ
ձեռքով ալ նիզակնին պատրաստ բըռ-
նած են : Այս ատենզօք կենդանի և արդ
անշարժ տեսարանն՝ դժնդակ զգացում
մը կը պատճառէ : Այսպէս երբեմն
գետնաժամին պատճառաւ թաղուած
մարդիկ կը գտուին, որք երկայն ատե-
նէ 'ի վեր դեռ պահած են իրենց վերջին
մտածման յետին շարժմունքը :

Գերմանիոյ նոր ճարտարապետու-
թիւնը յիշելու արժանի բան մը չըն-
ծայեր . բայց ընդհանրապէս քաղաք-
ներն լաւ շինուած են, և անոնց տէրերը
մտադիր խնամքով մը կը զարդարեն

զանոնք : Շատ քաղաքներու մէջ տուները պէսպէս գոյներով ներկուած են . սուրբերու նկարներով և ամէն տեսակ դարդերով . որոնց ձեն թէպէտ և կատարեալ չէ , բայց բնակութեանց երևոյթը կը փոփոխէ , և բարեմոյն փափադ մը կ'ընծայէ քաղաքայնոց և օտարականաց ախորժելի ըլլալու : Պալատի շքեղութիւնը և փառաւորութիւնը իր տիրոջ անձնասիրութեանը կը ծառայէ . բայց փոքր բնակութեանց խնամքով եղած զարդարանքը , տեսքը և գեղեցիկ գիւտը՝ հիւրասիրութեան գաղափար մը կու տան :

Գերմանիոյ շատ կողմերու պարտէզները դրեթէ Անգլիոյ պարտէզներուն պէս գեղեցիկ են . պարտիզաց ճոխութիւնն կը ցուցընէ որ կը սիրեն զրընութիւն : Անգլիոյ մէջ ամենապարզ տուներ՝ ամենաչքեղ պարտիզափակաց մէջ շինուած են . առանուտէրը իր բնակութիւնը անխնամ ձգելով , գեղը կը զարդարէ : Անտարակոյս այս անգլիական շքեղութեան և պարզութեան միութիւնն գերմանիոյ մէջ այն աստիճանին չեն հասնիր . սակայն նաև քիչ հարըստութեան և պայազատական հպարտութեան ետևէն կ'երևայ ամեն բանի մէջ գեղեցիկ սէր մը , որ շուտ կամ ուշ պիտի տայ ընտիր ճաշակ մը կամ շնորհք մը , վասն զի անոնց ճշմարիտ աղբիւնէ :

Շատ հեղ գերմանացի իշխանաց գեղեցիկ պարտիզափակաց մէջ , ծաղկապատ այրերու մօտ եւողեան քնարներ կու դնեն , որպէս զի հովս թէ ձայները և թէ հոտերը միատեղ տարածէ օդուն մէջ : Այս կերպով Հիւսիսոյ բնակչաց երեակայութիւնն կը ջանայ իտալիոյ բնութիւնը ձեւացընել . և շատ անգամ ամառուան գեղեցիկ աւուրց մէջ մարդ կրնայ խաբուիլ :

ՏԻԿԻՆ ՏԸ ՍԴԱՔ :

Լումոնտ լձին այցելուրիւն մը .

Պէն-կոմնտի ուրբը հասած ատենա՝ արևելքը կը սկսէր առաւտեան բոլոր պայծառութեամբը փայլիլ : Լոմնտ լիճը ոտիցս տակ ձգելով՝ զանազան կերպով լուսաւորուած լերանց երկայն գոտեաց միջէն կը բարձրանայի :

Քանի՞որ ուզզակի վեր կ'ելլէի , արեւուն ազգեցութիւնը և հովոց ուզզութիւնը լճին վրայի միզաց բազմաթիւ ձեեր և գիրքեր կու տային , որք ամեն վայրկեան զտեսարանը կը փոփոխէին : Երբեմն միայն լերանց զագալն առաւտեան սպիտակ շոգիներէն դուրս կ'ենէր , և բոլոր երկիրս և երկնքին ամպոց վրայ ծփացող սև նաւու մը պէս կ'երևար : Գալլերի տարանիւթ ժայռերը կախուելով այս մառախլապատ ովկիանոսին վրայ , որ կը թրչէր իմ կըտրած անսահման միջոցիս մակերեսոյթը , կը նմանէին երկու ժայռերու՝ որսնց դէմ մոլորեալ նաւերն խորտակելու մօտ ըլլան :

Վայրկեան մը ետքը ամենայն ինչ կ'երևար . լերինք մինչև իրենց խոնաւստորուները կը մերկանային . ջուրերն մեղմով գէպ ՚ի եղեղքները կ'որորային , թաւալելով անոնց վրայ այն թափանցիկ շոգեաց թեթև ծուէնները , որ իրենց կակլութքը և գունով ոչնարաց գզաթին և թռչնոց փետրոց կու նմանին , և զորս Գալետոնացիք իրենց յատուկ եղած նկարչական ճշմարտութեամբը կը կուն չձիմն պիտակ փետուրները : Քիչ ատենէն արեգակն իր ուժը կ'առնու . միայն իր քիչ մը հորիզոնական եղող ճառագայթները կը զարնեն երկրիս ուր առաջ հազիւ կը հասնէին : Ստուերներն կը քաշուին . և մառախուզքը կառքին անւոյն տակի թեթև փոշւոյն պէս հաղածուելով , այնպիսի թեթև և փախստական կերպով կը թռչին՝ որ ամենսին մերձաւոր առարկաները չեն նսեմացըներ , և զորոնք իբր թափանցիկ շարի մը միջէն որոշակի կը տեսնես :